Press Release

Ազգային Առաջնորդարան Ատրպատականի Հայոց Թեմի - Թաւրիզ
Armenian Prelacy of Azarbaijan P.O.Box: 51355-4455 TABRIZ - AZARBAIJAN IRAN

E-mail: arajnordaran.tavriz@gmail.com Tel: +98 411 5553532 Fax: +98 411 5542304

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՎԱՆՔԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Թաւրիզ, Ազգային Առաջնորդարան – Ս. Թադէի վանքի ուխտագնացութեան եւ այնտեղ կատարուելիք մշակութային ձեռնարկների առիթով, Ատրպատականի Հայոց Թեմի տարածքում գտնուող վանքերի եւ եկեղեցիների վերանորոգութեան մասնագէտ ճարտարապետների հայ եւ օտար անձերից բաղկացած մի խումբ, այցելեց Ազգային Առաջնորդարան, Թաւրիզ:

Ատրպատականի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանը Երկուշաբթի 16 Յուլիս 2012-ին ընդունեց խմբին, որը առաջնորդում էր Իրանում Եունեսքոյի եւ պետութեան կապ՝ Տիկ. Շէռլի Աւետեանը: Տիկ. Աւետեանի ներածական եւ խմբի աշխատանքների մասին ծանօթացման խօսքերից յետոյ, Կաթողիկոսական Փոխանորդը բարի գալուստ մաղթեց մասնագէտների խմբին, որի մաս էին կազմում Հայաստանի պատմական յուշարձանները վերականգնող ճարտարապետների Հայկական Ընկերակցութեան անդամներ՝ Աշոտ Յակոբեանը, Սամուէլ Այվազեանը, Վահագն Այվազեանը, Աշոտ Մանասեանը, Ամիրան Բաղիշեանը, Տիգրան Բաղիշեանը, Սուրէն Մելիք-Քարամեանը, Արտաւազդ Արզումանեանը, Վալերի Բալայեանը եւ Մանուշակ Դիդանեանը: Հայ Մշակոյթի Ուսումնասիրութեան եւ Վաւերագրումի Կենտրոնի նախագահ՝ Մինաս Լուռեանը, Միլանի Համալսարանէն՝ Ֆրանչէսքօ Օկելլին, Վենետիկի ճարտ. Համալսարանի վերանորոգման ամպիոնի դասախօս՝ Ճիորճիօ Ճիանիկան եւ նախկին թաւրիզահայ ճարտարապետ՝ Վահէտ Մասիհիվարդանեանը:

Հիւրերին իր գնահատանքի խօսքը ուղղելով, Կաթողիկոսական Փոխանորդ Հայր Սուրբը յիշեց անցեալում նրանց կատարած աշխատանքը, եւ յոյս յայտնեց որ նոր թափով ու նոյն խանդավառութեամբ պիտի շարունակի գործակցութիւնը: Ան նաեւ ամփոփ տեղեկութիւններ փոխանցեց այցելուներին, Թեմի հայաթափուած տարբեր շրջաններում գտնուող եկեղեցիների ներկայ վիճակի մասին, շեշտելով անմիջական վերանորոգումներ կատարելու անհրաժեշտութիւնը:

Այնուհետ ներկաները հարցեր ուղղեցին Հայր Սուրբին, յատկապէս հեռաւոր շրջաններում գտնուող ազգային եկեղեցական կալուածների պահպանման մասին, որոնց նա տուեց սպառիչ պատասխաններ: